# ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ

## ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Երբ մենք չենք կարողանում տեսնել կամ լսել, բաց ենք թողնում Աստծո Խոսքի սիրտը: Սա սահմանվում է որպես հոգևոր կուրություն, և նույնիսկ Հիսուսի աշակերտներն այդ հարցում բացառություն չէին: Բայցև այնպես, որպեսզի ունենանք ամբողջական պատկերը, թե ինչ է Աստված ուզում մեզ սովորեցնել կամ ցույց տալ, պետք է բաց աչքեր ու ականջներ ունենանք:

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԵՍ. 42:18-20

*Ով խուլեր, լսեցէք. և ով կույրեր, նայեցէք որ տեսնէք: 19 Ո՞վ է կույր՝ բացի իմ ծառան, և խուլ՝ իմ ուղարկած դեսպանի պէս. ո՞վ է կույր՝ նուիրեալի պէս. Կուրացան Աստծու ծառաները: 20 Շատ անգամ տեսաք, բայց չզգուշացաք, բաց էին ձեր ականջները, բայց չլսեցիք:*

- **Մենք չենք կարող Աստվածաշունչը հասկանալ, եթե հոգևորապես կույր լինենք: Սա ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՐՑ ՉԷ, ԱՅԼ ՀՈԳԵՎՈՐ:**

## 1. ԳԻՏԱԿՑԵԼ, ՈՐ ՄԵՆՔ ԱՌԱՆՑ ԱՍՏԾՈ ԿՈՒՅՐ ԵՆՔ: ՀՈԳԵՎՈՐ ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՂԱՆՈՒՄ Է ՄԵՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ:

- **Հոգևոր կուրությունը մեզ չի թողնում հասկանալ Աստծո Խոսքը:**

*Մատ. 13:14-15 - 14 Եւ նորանց վրա կատարվում է Եսայիի մարգարէութիւնն, որ ասում է. Լսելով կլսէք, և չէք հասկանա, և տեսնելով կտեսնէք, և չէք տեսնի: 15 Որովհետև ԹԱՆՁՐԱՑԱՎ ԱՑՍ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԻՐՏԸ, և իրենց ականջներով ծանր են լսում. և փակեցին իրենց աչքերը, որպէսզի երբեք աչքերով չտեսնեն ու ականջներով չլսեն և սրտով չիմանան և դարձի չգան, ու ես նրանց չբժշկեմ:*

- ***ՏԵՍՆԵՆ, ԼՍԵՆ, ՀԱՍԿԱՆԱՆ, ԴԱՐՁԻ ԳԱՆ – ԵՎ ԿԲԺՇԿՎԵՆ:***
- ***ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿ ՀՈԳԵՎՈՐ ԿՈՒՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԱՐԴԻԿ ՉԵՆ ԲԺՇԿՎՈՒՄ:***

*Եփ. 1:18 - 18 Այո՛, աղոթում եմ, որ Աստված լուսավորի ձեր սրտերի աչքերը, որպեսզի իմանաք, թե ի՛նչ է այն հույսը, որին Նա հրավիրեց ձեզ, թե ինչքա՜ն ճոխ ու փառավոր է այն խոստումը, որը ժառանգելու են Նրա ընտրյալները, և թե ինչքա՜ն գերազանց ու մեծ է այն ուժը, կարողությունն ու զորությունը, որ ներգործում է հավատացյալներիս մեջ:*

- ***ԵՎ ՄՈՎՍԷՍՆ ԻՐ ԵՐԵՍԸ ՔՕՂՈՎ ԾԱԾԿՈՒՄ ԷՐ՝ ՄԻՆՉԵՒ ՆՈՐԱ ՀԵՏ ԽՕՍԵԼՈՒ ՄՏՆԵԼԸ: (ԵԼ. 34:29)***
- ***Աստված տվեց Իսրայելին իրենց հոգևոր կուրությունը: (Հռ. 11:8)***

*2 Կոր. 3:14-16 - 14 Բայց նորանց միտքը կուրացավ. որ մինչև այս օրվա օրը այն քողը մնում է Հին Կտակարանի կարդացմունքի վրա վեր չառնուած, որովհետև Քրիստոսով խափանվում է: 15 Այլ մինչև այսօր երբոր Մովսէսին կարդում են, մի քող ընկած է նորանց սրտերի վրա: 16 Բայց երբոր դէպի Տէրը կդառնան, այն քողը վեր կառնուի:*

- *Երկու բան, որ հոգևոր կուրության պատճառ են դառնում:*

  *Եզ. 12:2 - 2 Մարդի որդի, դու ապստամբների (Rebelious) տան մէջ ես բնակվում, որոնք աչքեր ունին տեսնելու բայց չեն տեսնում, և ականջներ ունին լսելու բայց չեն լսում, որովհետև ապստամբների տուն են նորանք:*

  *Սոփ. 1:17 - 17 Եւ ես պիտի նեղեմ մարդկանց, որ կույրերի պէս ման գան, որովհետև Տիրոջ դէմ մեղանչեցին...*

- *Մեղքերից ապաշխարելը հոգևորապես արթնացնում է մեզ:*

## 2. ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ Է ԴԱՌՆՈՒՄ:

### *ՀԱՍԿԱՆԱԼ, ՈՐ ՄԵՂՔԸ և ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ ԿՈՒՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ Է ԴԱՌՆՈՒՄ:*

*Հով. 9:39-41 - 39 Եւ Հիսուսն ասեց. Ես դատաստան անելու համար եկա այս աշխարհ, որպեսզի չտեսնողները տեսնեն, և տեսնողները կուրանան: 40 Եւ Փարիսեցիներից ոմանք որ նորա հետ էին, լսեցին այս, և ասեցին նորան. Մի՞թէ մենք էլ կույր ենք: 41 Հիսուսը նորանց ասեց. Եթէ կույր լինէիք, մեղք չէիք ունենա. բայց հիմա ասում էք, թէ Տեսնում ենք. նորա համար ձեր մեղքերը մնում են:*

- *ԱՆԱՆԻԱՆ ԱՂՈԹԵՑ ՊՈՂՈՍԻ ՀԱՄԱՐ...*

  *Գործ. 9:18 - 18 Եւ շուտով նորա աչքերիցը թեփերի պէս վայր ընկան. Եւ իսկույն տեսավ, եւ վերկացավ մկրտվեց.*

  *Ես. 4:1 - 1 Այն օրը եօթը կին պիտի բռնեն մի տղամարդու և ասեն. «Մեր հացը կ՝ուտենք և մեր զգեստը կը հագնենք, միայն թէ քո անունը լինի մեզ վրա.*

  *Ղև. 26:26 - 26 Երբ ձեզ նեղեմ հացի պակասութեամբ, տասը կին ձեզ հաց պիտի եփեն մէկ թոնրի մէջ և ձեզ հաց պիտի բաժանեն հաշուած կշռով: Պիտի ուտէք ու չպիտի կշտանաք:*

  *Մար. 6:12-13 - 12 Եւ նորանք դուրս ելան, քարոզում էին, որ ապաշխարեն: 13 Եւ շատ դևեր էին հանում, և շատ հիվանդներին յուղով օծում էին և նորանց բժշկում էին:*

## 3. ԸՆԴՈՒՆԻՐ ՔՈ ՀՈԳԵՎՈՐ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԸ:
## ՀԻՍՈՒՍԸ ԲԱՑՈՒՄ Է ԿՈՒՅՐ ԱՉՔԵՐԸ:

*Մար. 8:22-25 - 22 Եւ գալիս է Բեթսայիդա. Եւ նորա առաջին մի կույր են բերում և նորան աղաչում, որ դպչի նորան: 23 Եւ նա բռնելով կույրի ձեռքից՝ գյուղից դուրս հանեց, և նրա աչքերը թքով թրջեց, և ձեռքը վրան դնելով նորան հարցրեց, թէ մի բան տեսնո՞ւմ է: 24 Նա բացեց աչքերը և ասաց. «Տեսնում եմ մարդկանց, որ շրջում են ինչպէս ծառեր»: 25 Նա կրկին ձեռքերը դրեց նրա աչքերի վրա. կույրը իր աչքերը բացեց և տեսնում էր. բժշկուեց և ամէն ինչ հստակ տեսնում էր:*

- *Հիսուսն առաջինը բացեց (այդ մարդու) հոգևոր աչքերը, երկրորդը նրա ֆիզիկական աչքերը բացվեցին:*

  - *Ի՞նչ են խորհրդապատկերում այս հատվածում ծառերը:*

    *Եր. 17:7-8 - 7 Օրհնեալ լինի այն մարդը, որ Տիրոջն է ապավինում, և Տէրն է նորա հույսը: 8 Նա նման կ'լինի մի ծառի, որ տնկուած է ջրերի մօտ. նա իր արմատները կ'ձգի գետի մօտով, երբ տօթը հասնի՝ չի վախենա.*

*Սաղ. 52:8 - 8 Բայց ես Աստծու տան մեջ տնկված մի պտղալից ձիթենի եմ. ես Աստծու ողորմությանն եմ հուսացած հավիտեանս հավիտենից:*

*Սաղ. 92:12 - 12 Արդարներն արմավենու նման պիտի ծաղկեն, պիտի աճեն Լիբանանի մայրիների պէս:*

*Ես. 55:12 - 12 Որովհետև դուք ուրախութեամբ պիտի դուրս գաք, և խաղաղութեամբ պիտի առաջնորդվեք, սարերն ու բլուրները պիտի բարձրաձայն ցնծան ձեր առաջին, և դաշտերի բոլոր ծառերը պիտի ծափ տան:*

- ***Ծառերի երկու տեսակներ: Ինչպե՞ս են այս երկու տեսակի ծառերը արտահայտում մեզ:***

*Մատ. 7:17 - 17 Այսպէս ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, և չար ծառը չար պտուղ է բերում:*

*Սաղ. 1:1-3 - 1 Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի մէջ չի գնում, և մեղավորների ճանապարհի մէջ չէ կանգնում, և ծաղր անողների աթոռի վրա չէ նստում. 2 Այլ նորա կամքը Տիրոջ օրէնքի մէջ է, և ցերեկ ու գիշեր նորա օրէնքի վերա է մտածում: 3 Եւ նա ջրերի գնացքում տնկուած ծառերի պէս է, որ իր պտուղը տալիս է իրան ժամանակին, և նորա տերևը չէ թափվում, և ամեն ինչ որ անում է հաջողվում է նորան:*

*Մար. 8:13-21 - 13 Թողեց նրանց, նորից նավակ մտավ և գնաց ծովի միւս կողմը: 14 Եւ աշակերտները մոռացան հաց վերցնել, և մէկ հացից ավելի չ՚ունէին իրենց հետ նավի մէջ: 15 Եւ նա պատվիրեց նրանց ու ասաց. «Զգու՛յշ եղէք փարիսեցիների խմորից և հերովդէսականների խմորից»: 16 Իսկ նրանք իրենց մէջ խորհում էին և ասում՝ Որովհետև հաց չունենք: 17 Հիսուս իմացավ նրանց խորհուրդը և նրանց ասաց. «Թերահավատնե՛ր, ինչո՞ւ էք ձեր սրտերում խորհում, թէ հաց չունէք. դեռ չէ՞ք հասկանում և չէ՞ք հիշում. Տակավին թմրա՞ծ է ձեր սիրտը: 18 ԱՉՔԵՐ ՈՒՆԷՔ ԵՒ ՉԷ՞Ք ՏԵՍՆՈՒՄ, ԱԿԱՆՋՆԵՐ ՈՒՆԷՔ ԵՒ ՉԷ՞Ք ԼՍՈՒՄ և դեռ չէ՞ք հասկանում ու չէ՞ք հիշում: 19 Երբոր այն հինգ հացը այն հինգ հազարի համար կտրեցի, քանի՞ զամբյուղ լիքը վերցրիք նորա կտորները. Եւ նորան ասեցին՝ տասներկու: 20 Եւ երբոր եօթը հացը չորս հազարի համար, քանի՞ զամբիւղ լիքը վերցրիք նորա կտորները. Եւ նորանք ասեցին, Եօթը: 21 Եւ նա նրանց ասաց. «Ապա ուրեմն ինչպէ՞ս չէք հասկանում»:*

- ***12 – Իսրայլի համար // 7 – Հեթանոսների համար:***

## ԱՄՓՈՓՈՒՄ

Մենք կարիք ունենք մի կողմ դնել հպարտությունը, ապաշխարել մեղքերից և ըմբոստությունը թողնել հետևում: Հիսուսն եկավ, որպեսզի մենք կարողանանք տեսնել: Նա ուզում է, որ մենք բոլորս ստանանք այն հոգևոր հայտնությունը, որ Նա ունի մեզ համար: